



Հ Ր Ա Մ Ա Ն № 286 - ՂԻ

ք.երևան

«25» 03 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
2016 ԹՎԱԿԱՆԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) 2015թ. գործունեության արդյունքների ամփոփման կոլեգիայի նիստի ընթացքում առաջադրված խնդիրների կատարման ապահովելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. մարտի 3-ի N259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

#### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝ «ՀՀ ԱԻՆ 2016 թվականի կոլեգիայի նիստում ՀՀ ԱԻՆ 2015 թվականի գործունեության արդյունքների ամփոփման ընթացքում առաջադրված միջոցառումների իրականացման պլան-ժամանակացույց»-ը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1)-ին և 4)-րդ ենթակետերի, 4-րդ, 7-րդ, 9, 10 և 11-րդ կետերի միջոցառումների կատարման պատասխանատու հանդիսացող ստորաբաժանումների պետերին՝ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարին՝ 2016 թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 10-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև դեկտեմբերի 5-ը:

3. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին կետի, 2-րդ կետի 2)-րդ և 3)-րդ ենթակետերի, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերի միջոցառումների կատարման պատասխանատու հանդիսացող ստորաբաժանումների պետերին՝ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենին՝ 2016 թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 10-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև դեկտեմբերի 5-ը:

4. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված միջոցառումների համակատարող հանդիսացող ստորաբաժանումների պետերին՝ միջոցառման հետ կապված առաջարկությունները կամ այդ ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել պատասխանատու ստորաբաժանման պետին՝ եթե այլ ժամկետներ սահմանված չեն, 2016 թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 5-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև նոյեմբերի 25-ը:

5. ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենին՝ ապահովել սույն հրամանի 3-րդ կետով ստացված տեղեկատվության ամփոփումը և ներկայացնել ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարին՝ 2016 թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 15-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև դեկտեմբերի 10-ը:

6. ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն հրամանի 2-րդ և 5-րդ կետերով ստացված տեղեկատվության ամփոփումը ու ներկայացնել ինձ՝ 2016 թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 20-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև դեկտեմբերի 15-ը:

7. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

8. Հրամանը հայտարարել ըստ առնչության:



Ա.Երիցյան